ՎԱՐԹԱԲԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ՓԵՏՐՈՒԱՐ 1883 Ա. ՏԱՐԻ № 7

ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ։

ՄԵՔԻՒՐ ՍՊԻՏԱԿ ՊԱՏ

կամ

ՓՈՔՐԻԿ ՄԱՆՈՒԿԸ, ՈՐ ՅԱՆԿԱՆՈՒՄ ԷՐ ՆԿԱՐԻ ՀԳԱՒԻՆԸ։

Բոլոր մանուկները, թէ տղայ և թէ աղջիկ սիրում են պատկերներ, շատերը սիրում են նաև նկարել։ Մինչև անգամ գիւղի տղերքը զարդարում են այդու. տան պատը տմենազարմանալի նկարներով։ Կոշկակարի մի փոքրիկ աշակերտ պատի մօտով անցնելիս, միշտ կանգնում էր ու նկարում մի աչքանի կին։ Երեւում էր, որ այդ պատկերը նորան շատ դուր էր եկել, որովհետև. ամէն անգամ միեւնոյնն էր նկարում։ Ես կարծում եմ, որ չար տղայք սպիտակ պատը շատ են սիրում։ Սպիտակ պատի մասին պատմելիս մտաբերում եմ Պետրոս դո Կորտոնայի, Իտալիայի հռչակաւոր նկարչի մանկութիւնը։ Պիէտրոն հօտաղ էր Իտալիայի մի

գեղեցիկ գիւղում։ Նա նման չ'էր գիւղի բիրտ ու կոպիտ տղերանց, որոնք բացի սև հացի ու մակարոնի՝ ուրիշ ոչ մի բանի վերայ չեն մտածում։— Ո՛չ,— նա իր հօտի ետևից ընթանալով գեղանկար հովիտներով, նայում էր կապոյտ երկնքին, մայր մտնող արևի վայլուն շողերին ու մտածում էր, թէ որքան սիրուն է իրան շրջապատող բնութիւնը։ Կիրակի և տօն օրերին ծնկաչոք Ս. Աստուածածնի պատկերի առաջ նա այնքան ժամերգութեան վերայ չէր մտածում, որքան այն պատկերի մասին, ուր գեղաշնորհ Կոյս Մարիամի նկարն էր դուրս բերած տխուր աչքերով, մանուկ Յիսուսը ձեռին։ Պիէտրօն ի բնէ նկարիչ էր, թէև ինքն այդ բանը իր մէջ չէր նկատում։ Յաճախ փորձում էր նկարել և միշտ Ֆլորէնցիայի պատկերազարդ դահլիճների ու գեղարուեստի զարմանալի արտադրութեանց մասին լսելիս, նա ցանկանում էր, նա յոյս ունէր, որ մի օր ինքն էլ կարժանանայ դրանց տեսնելու Ֆլորէնցիայում։ Ֆլորէնցիայի մասին մտածելիս, յիշեց իր հին բարեկամ Տօմազօին։ Նա էլ հօտաղ էր, միայն թէ այժմ ծառայում էր Ֆլորէնցիայում իբրև խոհարար եպիսկոպոս Սակկէտիի մօտ։ «Երջանիկ տղայ, նա կարող է զմայլվիլ հռչակաւոր պատկերներով, տեսնել անթիւ ու անհամար հիանալի արդիւնքներ» Մ'ի անգամ Պիէտրօն անհետացաւ գիւղից։ Մ'ինչդեռ գիւղացիք շփոթուած մտածում էին թէ ինչ պատահեց օտարոտի երեխային, որ այնպէս սիրում է բնութիւնը, նա էլ յետ չը նայելով առաջ էր գնում հեքիաթների փոքր հերոսի պէս. վերջապէս յոգնած ու առանց մի գրօշի հասաւ իր ցանկացած գեղարուեստի քաղաքը։ Երկար ժամանակ պտրում էր եպիսկոպոսի ամրոցը և վերջապէս գտաւ Տօմազօին։ Տօմազօն աչքերը չռեց նորա վերայ ու զարմացած բացականչեց. «Այդ դո՞ւ ես Պիէտրօ, քեզ ո՞ր քամին բերեց Ֆլորէնցիայ։ Ախար ինչո՞ւ ես այդքան հեռաւորութիւն ոտով եկել այստեղ»։

—Ես եկել եմ սովորելու Տիրամօր պատկերների

նկարելը, համարձակ պատասխանեց Երեխան։ Ես ուզում եմ նկարիչ դառնալ։

«Աւելի լաւ չէ՞ լինի մնաս այստեղ ու խոհարարութիւն սովորես։ Ես մտադիր եմ ժամանակով լաւ խոհարար դառնալ։ Շատ լաւ բան է— այստեղ խոհարարներին շատ լաւ են վարձատրում։ Հաւատացնում եմ քեզ, Պիէտրո, այդ բանը նկարչութիւնից շահաւետ է։

—Բարեկամս, խիստ լաւ, միայն չես կարող ինձ բան ուտացնել, յոգնած հոգիս դուրս է գալիս։ Գործերի մասին յետոյ կը խօսենք։

Տօմազօն յեանի դռներով տարաւ իր երկրացուն խոհանոցը, որ սպիտակ ներկած մի փոքրիկ սենեակ էր և խնդրեց այնտեղ տեղաւորուիլ, իսկ ինքը գնաց Եղիսկոպոսի ճաշի մնացորդը բերելու։ Տօմազօն շուտ վերադարձաւ, կերակուրը ձեռին։ Երկուսով անկողնի վերայ ամէն բանը դարսոտեցին և ուրախ ու զուարթ ճաշկերոյթ սարքեցին, ուրախ ժամանակ անցնելով։ Նրանք շատ երջանիկ ու բաւական էին։

—Է՜հ, այս բոլորը շատ լաւ, ասաց Տօմազօն, պատրաստ եմ ամէն բանից քեզ բաժին տալ—թէ ճաշից և թէ անկողնից, քանի որ չ՚են իմացել. բայց նկարչութիւնդ, ինչ պիտի անես, փող ունիս արդեօք թուղթ ու մատիտներ գնելու։

—Ես մի գրօշ չունիմ, ասաց Պիէտրօն, ոսկորը անուշ կրծելով, բայց չէ՞ որ կարող եմ քո ռոճիկից մասն ստանալ, քեզ համար խօ այդ միևնոյն է, բարեկամս։

—Բայց ես ռոճիկ չեմ ստանում, ասաց խեղճ Տօմազօն, ինձ լաւ են կերակրում և ես առ ժամանակ անռոճիկ եմ ծառայում։ Պիէտրօյի բանը բուրդ էր։ Նա որքան էլ չը սիրէր նկարչութիւնը, այնուամենայնիւ ոսկորտանքով ու ճաշի մնացորդով անկարելի էր նկարել։ Բայց չէ՞ որ թղթի փոխարէն նա մի որ և իցէ բանի վերայ կարող էր նկարել։

Նա չը վհատեցաւ, յետ նայեց և տեսաւ խոհանոցի սպիտակ ու մաքուր պատերը։ Դրանք կը հարկաւորուին, խոհանոցից էլ այրած փայտի կտոր կը հանի և այդպիսով ածուխ կունենայ և սպիտակ պատերը— ուստի առ ժամանակ կարող է գծագրութեամբ պարապել, մինչև որ մի աւելի լաւ բան լոյս ընկնի։

Առաւօտից մինչև երեկոյ նկարում էր, ջնջում ու թրև գալի պատկերների դահլիճներում, աշակերտներին դիտում ու յետոյ վերադառնում նորից գծագրում ու ջնջում։ Այդպէս շարունակում էր մինչև մի երջանիկ օր՝ Տօմազօն ամբողջ կրոնի (մէկ կրոնը հաւասար է 1 ր—50 կոպէկի) տէր դարձաւ։ Երջանկութեամբ և բաղտաւորութեամբ տուեց այդ փողը իր թագկացած բարեկամին։ Պիէտրօն փողը տեսնելիս ուրախութիւնից աղաղակեց։ — Երկուսով շտապ շտապ գնացին փող մսխելու մատիտների, թղթի և նկարչութեան այլ պատկանելիքի վերայ։ Տօմազօն իր համար ոչինչ չը թողեց։ Այնուհետև Պիէտրօն աւելի մեծ ջանքով բոլորովին ուրիշ տեսակ էր աշխատում առաւօտից մինչև գիշեր։ Լուսադէմին գնում էր ու համբերութեամբ նկարում էր Ֆլորէնցիայի շրջակայքը, որ Եւրոպայի ամենագեղատեսիլ քաղաքներից մէկն է։ Ֆլորէնցիան լի է հոյակապ եկեղեցիներով, մեծ ու սքանչելի պալատներով, պատկերների դահլիճներով և գրադարաններով, որոնք բաց են ժողովրդի համար. այստեղ կան հրաշալի արձաններ, կիսարձաններ, դրօշակներ. մէկ խօսքով կայ այն բոլորը, ինչ որ կարող է նկարչին զարգացնել։ Կարող էք երևակայել թէ ի՞նչպիսի զարմանքով և յափշտակած նայում էր այդ բոլորին դիւղացի տղան։ Մի քանի օր շարունակ նա մէկ տեղից միւսն էր անցնում։

Երբեմն նա զմայլվում էր եկեղեցու հոյակապ գաւիթով, երբեմն ժամերով կանգնած աւազանի առաջ հիանում էր նորա շողշողուն ջրերով։ Նա սաստիկ աշխատելուց յետոյ յոգնած և նուազած ստիպուած էր

վերադառնալ Տամազոի բնակարանը։ Այստեղ բարձի տակ պահած էր նորա բաժինը։ Ճաշից յետոյ ցոյց էր տալիս իր բարեկամին նոր նկարներ, որոնք թէև շատ զարմացնում էին Տամազոին, այնու ամենայնիւ նա հաւատացնում էր, որ խոհարար լինելը աւելի օգտակար է։

Այսպէս անցաւ երկու տարի։ Առաջի ամսուայ թոյլ գծագիրները, այժմ արդարև շնորհքով էին նկարուած։ Փոքրիկ սենեակի պատերը զանազան տեսակ նկարներով զարդարուած էր։ Պիէտրոն մեծ ջանքով էր աշխատում, իսկ Տամազը իրան յատուկ բարեհոգութեամբ բաժանում էր աշխատածը։ Նրանք թէև շատ խեղճ, բայց և շատ երջանիկ էին։

Բայց ահա՛ նրանց կեանքում մի սաստիկ և փոքր ինչ օտարոտի փոփոխութիւն եղաւ։ Հզօր եպիսկոպոս Սակկէտի ուզեց իր տունը մի քիչ նորոգել։ Կանչեց ճարտարապետին նրանից խորհուրդ հարցնելու այդ բանի մասին։ Ճարտարապետը դեռ չը տեսած խոհանոցի քունջ ու պուճախը, որոշակի ոչինչ չ'էր կարող ասել։ Եպիսկոպոսը ճարտարապետի հետ միասին մտան իւր փոքրիկ խոհարարի ննջարանը։ Սենեակը դատարկ էր, իսկ պատերը ծածկած էին նկարներով, որոնք զարմացրին թէ եպիսկոպոսին և թէ ճարտարապետին։ Այս ինչ է, հարցրեց Սակկէտին, մի՞թէ փոքրիկ խոհարարը կարող է այսպէս նկարել»։

Եւ հրամայեց որ նորան իսկոյն կանչեն։ «Շատ շնորհալի տղայ է երևում։ Ես նորան կ'օգնեմ և ժամանակով նա Ֆլորէնցիայի պարծանքը կը լինի»։

Հէնց իսկ այդ րոպէին վախեցած ու շփոթուած մտաւ Տամազոն։ Նա կարծում էր, որ սրբազանը Պիէտրոի խրժբժտիլը տեսաւ ու իմացաւ, որ նրան թագուն պահում էր ու կերակրում և որ նա երկուսին էլ խայտառակ կերպով տանից դուրս կ'անի։

—Այստեղ ե՞կ, Տամազո, ասաց եպիսկոպոսը. այսու-

հետև խոհանոցումս էլ չ'ես ծառայիլ։ Ես սխալուելեմ քեզ խոհարար նշանակելով։

«Մի դուրս անէք ինձ, սրբազան հայր, աղաչում էր Տօմազօն արտասուելով։ Ի՞նչ կանի խեղճ Պիէտրօն եթէ ինձ դուրս անէք. նա պիտի նկարիչ դառնայ, նա քաղցածութիւնից կը մեռնի, մշակութիւն կանեմ միայն թէ կերակուր աշխատեմ նորա համար։ Աղաչում եմ ձեզ մի հեռացնէք ինձ, ես բոլորը ընկերոջս համար էի անում»։

Այս խօսքերից եպիսկոպոսը իմացաւ, որ նորան հիացնող պատկերների ստեղծողը Պիէտրօն է և ոչ թէ իւր խոհարարը։ Գգուանքով քաջալերեց Տօմազօին և խնդրեց հէնց իսկ ընկերոջ վերադառնալիս նորան իր մօտ բերել։

Դիշերն անցաւ, միւս օրն էլ, բայց Պիէտրօն չէր երևում։ Վերջապէս մէկ շաբաթից յետ եպիսկոպոսն իմացաւ, որ տղան մօտակայ վանքերից մէկումն է և դուրս է նկարում Ռաֆայէլի նկարած Տիրամօր պատկերի հիանալի օրինակը։ Վարդապետները ուզում էին համոզել շնորհալի պատանուն իրանց մօտ մնալու, բայց Պիէտրօի նոր բարերարը յետ բերել տուեց նորան Ֆլորէնցիայ և յանձնեց ամենալաւ նկարիչներից մէկին, ուր նա իր բոլոր ընկերներին գերազանցեց, որովհետև նոցանից ընդունակ և աշխատասէր էր։

Պիէտրօն բնակվում ու աշխատում էր թէ Ֆլորէնցիայում և թէ Հռոմում։ Ճանապարհորդները մինչև այս օրս զմայլվում են նորա պատմական նկարներով Գօարբէրինօի պալատում։ Նա նկարում էր հրաշալի կերպով և սիրում էր ազդու ու պայծառ ներկեր։

Թէև շատերը զարմացած են մնում նորա նկարները տեսնելիս, այնու ամենայնիւ շատ չէ նորա պատմութիւնն իմացողների թիւը, թէև նորա անունը այն անուններից մէկն է, որոնցով Իտալիան պարծենում է։

Իսկ Տօմազօն։ Նա յիսուն տարի շարունակ Պիէտրօի ամենալաւ բարեկամն էր և երբ երկուսն էլ ծերացան

դարձեալ միասին բնակուեցին Ֆլորէնցիայի ամենասքանչելի դղեակներից (ամրոց) մէկում։ Ի հարկէ, նրանք յաճախ ծիծաղում էին յիշելով իրանց մանկութիւնը, թէ ինչպէս կերակուրը բարձի տակ էին պահում ուայլն։

Այո, փոքրիկ բարեկամներս, եթէ ուզում էք մի որ և իցէ բան լաւ շինել, պիտի աշխատասէր և տոկուն լինիք. ով ձեզանից մի առանձին սէր է զգում դէպի մի որ և իցէ պարապմունք, ըրջօրէն պիտի ձեռ տայ այն գործին։ Եւ լաւ միտը պահէք, որ լաւ նկարելու համար բաւական չէ միայն կտաւ ու ներկ։ Ուրիշ գործքերումն էլ յաջողութիւն են ունենում շատ զրկանքներից, համբերութիւնից և տոկուն աշխատանքից յետոյ։ Այժմ իհարկէ սովորելու այնքան միջոց կայ, որ տանից փախչելն էլ հարկաւոր չէ։ Ֆլորէնցիան շատ երևելի նկարիչներ է տուել աշխարհին, որոնցից ամենահռչակուած է Լէօնարդի դա Վինչի։ Պատմում են, որ դասի ժամանակ այնպիսի մի սքանչելի հրեշտակ է նկարել, որ ուսուցիչը վհատած բոլորովին թողել է նկարչութեան պարապմունքը։ Լէօնարդօ դա Վինչին մի այլ անգամ միտք դնելով նկարել մի առասպելական հրէշ, նա իր տունը չղջիկներով, օձերով, գորտերով ու ամէն տեսակ սողուն կենդանիներով լցրեց։ Ուշադրութեամբ զննում էր նրանց, որպէս զի ճիշտ իմանայ թէ նրանց մէջ զզուելի իսկապէս ինչ է և յետոյ միայն սկսեց իր աշխատանքը։ Նա այնպիսի սարսափելի դլուխ նկարեց, որ նորա ծերունի հայրը այդ նկարը տեսնելիս սարսափով փախաւ։ Այդ օտարոտի պատկերը մինչև օրս կարելի է Ֆլորէնցիայում տեսնել։ Այդ օրինակը մեզ ցոյց է տալիս, թէ երևելի մարդիկ ինչպիսի աշխատասիրութեամբ և տոկունութեամբ են վերաբերվում իրանց գործին, որքան էլ դժուար չը լինէր այդ գործը։

Թարգ. ՕՐ. ՄԱՐԻԱՄ ՄԱՏԻՆԵԱՆ.

ՆԱՊԱՍՏԱԿՆ ՈՒ ՎԱՀԱՆԸ*)։

Փոքրիկ Վահանը նապաստակ
Դեռ չէր տեսել իւր կեանքում.
Յանկարծ մի օր թփի տակ
Պատահեցաւ այդ կենդանուն։

«Այս ինչ գազան է, Տէր Աստուած»
Մտածում էր անփորձ տղան,
«Կուլ կը տայ ինձ անկասկած,
Եթէ այստեղ երկար մնամ»։

Դողը ընկաւ նապաստակին,
Կարծելով թէ նա որսորդ է.
«Թէև», ասաց, «սա՝ զէնք չունի,
Բայց և այնպէս շատ զօրեղ է»։

Նայում էին սոքա միմեանց
Մի կարճ միջոց ահ ու դողով.
Եւ լուռ ու մունջ նոքա յանկարծ
Այս կողմ այն կողմ փախան շուտով։

Թարգ. Գ. Տ. Ա.

*) "Семья и школа„ 1880 № 5.

ՃՇՄԱՐՏԱՍԷՐ ՄԱՆՈՒԿ *)

Գտնվում էր ծննդեան տօնը։ Եղանակը շատ ցուրտ էր և պարզ։ Ուսումնարանի մի մեծ դասարանում նստած էին մօտ 50 երեխայք և լսում իրանց վարժուհու պատմած վէպը։ Առաջիկայ արձակուրդի առիթով գրագիտութիւն ուսուցանող վարժուհին դաս տալու փոխանակ, պատմում էր մի վէպ մանկական կեանքից։ Պատմողը խօսում էր պարզ, ազդու և այնպիսի ոգևորութեամբ, որ գրաւել էր իւր ունկնդիրների ուշադրութիւնը։

Պատմութեան բովանդակութիւնը մի ճշմարտասէր երեխայի մասին էր։ Երեխան իւր արդարասիրութեան համար շատ նեղութիւն էր կրել, ծաղրելու առարկայ էր դառել իւր ընկերների համար, մեծերից էլ շատ անբաւականութիւն տեսել, շատ զրկանքների և փորձանքների հանդիպել, բայց և այնպէս ոչ մի անգամ սուտ չէր ասել և մի անկարգ վարմունք չը գործել։ Եւ դորա համար վերջը նորա առաքինութիւնը ամէնքը գնահատում են, բոլորն էլ նորան յարգում, թէ իւր ընկերները և թէ իւր մեծերը։

Փոքրիկ երեխայի պատմութիւնը սաստիկ ոգևորել էր աշակերտներին։ Պատմողը երբեմն քննական աչք գցելով մանկանց վրայ նկատում էր, որ նորա ունկընդիրները երեխայի տարաբաղդութիւնները լսելիս լացակրթնում էին և նոցա աչքերը փայլում, երբ երեխան փորձանքից ազատուելով պահպանում էր իւր ճշմարտասիրութիւնը։

---

*) „Семья и Школа“ 1882, № 12.

Մանաւանդ մեծ ուշադրութեամբ լսում էին այն պատմութիւնը երկու տասը տարեկան երեխայք, որ աւելի մօտիկ էին նստած։ Այս երկու երեխանցից մէկը հագնուած էր թէպէտ և մաքուր, բայց երևում էր որ չքաւոր ծնողների որդի էր, իսկ միւսը աւելի լաւ հագուստ ունէր։ Այնպէս ոգևորվում էին սոքա տեղ տեղ, որ ակամայ բերաններից թռչում էր պատմածի առիթով՝ «անպիտան», «փուչ» և «շատ գեղեցիկ է» բառերը։

Պատմութիւնը վերջացնելուց յետոյ վարժուհին աւելացրուց, թէ ամէն մէկդ էլ կարող է իւր կարողութեան չափ հետևել այն երեխայի օրինակին և լինել ճշմարտասէր և պատուելի։ «Եւ ճշմարիտ որ սուտ խօսելը վատ բան է եղել» կրկնեցին իրանց սրտի մէջ շատերը, «այդ էլ մի մեղք է» և ցանկանում էին շատ ու քիչ նմանիլ այն երեխային։ Շուտով աշակերտները արձակուեցան և բոլորն էլ շտապով վազեցին դէպի իրանց տները։

Իսկ յիշեալ երկու աշակերտները մնացին իրանց տեղերումը անշարժ. նոքա կարմրել էին և գրգռուել այն պատմութիւնը լսելիս։

—Ի՞նչ լաւ է արել երեխան, ասաց չքաւոր մանուկ Տիգրանը ինքն իրան։

—Ի՞նչպէս սիրուն է վարուել նա, դուրս թռաւ նորա ընկեր Արշակի բերանից. ի՞նչ լաւ կը լինի որ յանկարծ մենք էլ նորա նման դառնանք։

—Ես էլ այդ էի մտածում, ասաց վճռողաբար Տիգրանը։

—Ե՛կ, խօսինք, մտածենք դորա մասին, ասաց ոգևորուած Արշակը, միայն ոչ այստեղ, որովհետև դասարանը շուտով փակելու են, այլ ճանապարհին։

Հաւաքեցին իրանց գրքերը և դուրս գնացին։

Ճանապարհին Արշակը Տիգրանին ասաց թէ՝ «ես շատ սիրում եմ մեր վարժուհու պատմութիւնները և ի՞նչպէս պարզ է և հասկանալի։ Ի՞նչ ես կարծում,

Տիգրան, այդպիսի գրքերի մէջ գրած պատմութիւնները ուղիղ են արդեօք։

—Ես կարծում եմ ուղիղ պիտի լինին, հաստատաբար պատասխանեց Տիգրանը, ինչու պիտի խաբեն. ոչ, ուղիղ կը լինի և վարժուհին ասաց, թէ դուք էլ կարող էք լինիլ այն երեխայի պէս։

—Միտդ է, ասաց Արշակը, ինչքան նեղացնում, չարչարում էին այն երեխային, բայց նա երբէք չէ թոյլ տուել իրան սուտ ասելու. «ինչ կամենաք արէք ինձ, պատասխանում էր նա ամէնքին, ես էլի ուղիղը կասեմ»։

—Ե՛կ մենք էլ խօսք կապենք այնպէս վարուելու, ասաց Տիգրանը։

—Ահա այսօր Մնացականեանը քարեգրիչ խնդրեց ինձանից, ես նրան պատասխանեցի, ասաց Արշակը, թէ չունիմ. բայց գրպանումս ունէի քարեգրիչ և դիտենալով որ նա այլ ևս չի վերադարձնի, ես սուտ խօսեցայ։ Ափսոս։

—Միւս անգամ ուրեմն կամ տուր խնդրածը, եթէ ունիս, պատասխանեց Տիգրանը, կամ ասա՝ թէպէտ ունիմ, բայց ինձ էլ պէտք է։

—Ես սուտ չեմ ասիլ այլ ևս, ասաց Արշակը։

—Ես էլ միշտ ճշմարիտը կասեմ, վրայ բերեց Տիգրանը։ Ուրեմն չը մոռանանք. խօսքը խօսք է. Վաղը որ պատահինք, պատմենք թէ ինչպէս ենք մեր խոստմունքը կատարել։

Երեխայք հեռացան միմեանցից և գնացին ամէն մէկը դէպի իրանց տուն։

Տիգրանը մի վերստաչափ հանապարհ ունէր անց կենալու և այն թեթև հագնուած և մաշուած կօշիկները ոտին։ Սաստիկ մրսում էր. ցուրտը որ շատ նեղացրուց, վազելով գնաց շուտով տուն հասնելու։

Նոյա բնակարանը մի յետ ընկած նեղ փողոցումն էր և բաղկացած էր մի սենեակից։ Մի փոքրիկ նախասենեակում կային ջրի ամանը, մաղը, լուացքի թաբաղը

և կոտրտած աթոռներ։ Սենեակումը մի պատուհանի մօտ նստած էր նորա տասնուվեց տարեկան քոյրը կարը ձեռքին։ Նա շտապով կարում էր շապիկ, ժամանակ ժամանակ սառած մատները իւր բերնաշնչով տաքացնելով։ Սենեակի մի անկիւնում պառկած էր թախտի վրայ նորա չորս տարեկան քոյրը, որ ինչպէս երևում էր հիւանդ էր և մօտը նստած էր մի հասակաւոր կին—նորա մայրը հին մաշուած հագուստով։

(Կը շարունակուի)

Թարգ. Գ. Տ. Ա.

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ, ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ, ԽՆԴԻՐՆԵՐ.

Վեցերորդ համարի մէջ գտնուած զուարճալիքների բացատրութիւնը։

37) Ժամանակը դրամագլուխ է ով պատանի խոհեմութեամբ գործ դէր։

38) Սպիտակ տակառիկ, մէջը երկու ցեղ ըմպելիք. (Ձու։)

39) Սուտ ասողի տունը կրակ ընկաւ, ոչ ոք չը հաւատաց։

40) Հազարից մի անգամ զատիկ՝ էն էլ նաւակատիկ։

41) Ա. Ն ա Գ
Ր ե ս Ա.
Ա. ր ա Մ
Ֆ ա ք Ա.
Ս ի ս ե Ռ
Ի ն չ Ֆ
Ա. Ն Ն Ա.
Ր Է շ Թ
Ց ք Ի
Ո Ի Ն ա Պ
Ն Ա.
Ֆ ա հ ա Ն ա Ց

42) Բանալի։ 43) Աղբիւր։ 44) մարդ. դրամ։
45) Ջրաղաց։ 46) գետ։ 47) Ամիս. ամ. միս. ամի.մի։

Ամսագրիս չորրորդ համարի մէջ գետեղուած № 24 խնդիրը մենք արդէն բացատրել ենք։
Այժմ այդ խնդրի զուարճալի մեկնութիւնը, որ ստացել ենք Յ. Ք. Տ. Յ-ից այնքան սրամիտ է, որ մենք

մ	ա	հ	ա	կ
ա	ւ	ա	ղ	
հ	ա	ւ		
ա	ղ			
կ				

աւելորդ չենք համարում այդ բացատրութիւնը այստեղ բերել։ Յիշեալ անձը ահա թէ ինչպէս է մեկնում այդ խնդիրը՝ հետևեալ նախադասութեամբ՝ «Մահակը հաւին դիպած, տէր պառաւը՝ աւաղ հաւ՝ կը գոչէ, իսկ դիպցնողը՝ եփելուց յետոյ՝ աղ կը կանչէ, և վերջին «կ» տառովը՝ իւր ընկերներին՝ կերէք ասել գուզէ։

---

48) (Առաջ. տասնամեայ մանուկ՝ Շուշեցի Ղուկաս Տէր-Մկրտչեանցի։)



Դ 1

ուզիր որ

Էն բառի նոյնանիշը

Ք

սը տայ։
սը

49. (Առաջ. Ներս. Դպր. 6 դաս. աշակ. Բարդ. Խորոմվեան.)

50. Առաջ. Գէորգ. Ճեմ.ա.լսար. Ուսան. Տ. Յովհաննիսեանի.)



ՆԵՆ ՆԵՆ ՆԵՆ
ՆԵՆ ՆԵՆ ՆԵՆ

51) Առաջ. նոյն անձի.)

ԸՅ

ԻՍ Ճ

ԿԸՆԽ:

52) Առաջ. Ներս. Դպր. 4 դաս. աշակ. Երուանդ Պալեանի)

Մի պսակ ունիմ վեց հատ աստղերից
Քաղել եմ նախկին ծանօթ դարերից,
Բացի մի հատից մընացած հինգին
Սկզբնատառերն նոյն հնչիւնն ունին:
Առաջին աստղն է համաստեղութիւն,
Մի տառը բաց թող ազգի է անուն.
Երկրորդը երեք վանկից կը կազմի
Երեքից մինը մի մասն է ծառի:
Երրորդին մէջը թէ որ լաւ փնտռես
Տարուան գեղեցիկ ամիս կը գտնես.
Իսկ չորրորդ աստղը երկու բաժանէ
Երկրիս մասերին, հինգին մէջ ցըրուէ,
Գընա ու փընտռէ մէկին կամ միւսին
Մէջը կը գտնես մի մասն այն աստղին:
Իսկ հինգերորդից բաց թող դու մի տառ
Աչից ու ձախից կարդա՛ հաւասար,

Որդւոյն կը գտնես դու վեցերորդին
Ծանօթ սիրելի ամէն մի Հային։
Ով գտնէ այս վեց աստղերի անուանք
Նորան կընծայեմ այս անգին սլսակ։

53) Առաջինը—ձայնաւոր տառ է, երկրորդը—մեր աչքերին վնասում է, իսկ ամբողջը՝ մեզ տաքացնում է։ Իմացէք թ՞նչ է։

54)

Ներկայ ազիւսակի մէջ դասաւորել 6 ա. 4 պ. 2 տ. 2 հ. 1 ն. 1 դ. 1 ի. 1 գ. 1 ը. այնպէս որ կարդացուի վերևից ներքև. յետոյ աջից ձախ և հակառակ՝ նշանակութիւն ունենալով։

55) Երկու գիւղացի գառներ էին քշում ծախելու։ Ճանապարհին նոցանից մէկը ասաց իւր ընկերոջը՝
—Եթէ դու քո գառներից մէկը ինձ տայիր, ես այնքան կ'ունենայի որքան և դու։
Մ'իւսը պատասխանեց՝
—Եթէ դու ինձ գառներիցդ մէկը տայ'ր, ես կ'ունենայի երկու անգամ աւելի քան թէ դու ունես։
Հարց՝ Գիւղացիներից իւրաքանչիւրը որքա՞ն գառն ունէր։

ԽՄԲԱԳԻՐ—ՀՐԱՏԱՐԱԿՈՂ Ն. ԽՈՍՐՈՎԵԱՆ

Дозволено цензурою. Тифлисъ, 14 Февраля 1883 г.

Типографія М. Вартапянца и К. противъ Троиц. церк.

«Վարժարանի» խմբագրութիւնը խնդրում է այն բաժանորդներին, որոնք դեռ մինչև այժմ չեն վճարել տարեկան բաժանորդագինը, բարեհաճեն հատուցանել. հակառակ դէպքում Խմբագրութիւնը ստիպուած կը լինի դադարեցնել հետևեալ համարների ուղարկելը։

Դուրս եկաւ «ԱՂԲԻՒՐԻ» առաջի համարը հետեւեալ բովանդակութեամբ՝

Շնորհաւոր նոր տարի. Բանաստեղծութիւն։—Ուրիշի բունը քեզ բուն չի դառնալ։ ծիծեռնակների կեանքից։—Օձամանուկ և արևահատ (հէքիաթ)։—Թագաւորն ու արհեստաւորը (վրացերէնից) Աղաւնիներ (Տուրգենևից։)

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ.

Մի դիալոգ։—Դեմոսթենի խորամանկութիւնը։—Մի սրամիտ խորհուրդ։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ.

Հանելուկներ (7 հատ.)—Շուտասելիք։—Տպարանական հանաք։—Հետաքրքիր թիւ։—Շախմատ խաղի վրայ հիմնուած մի խնդիր։—Բեբուսներ (2 հատ)։—Թեթեռնիկ. երգ նոտաներով։

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ։

Խմբագրութեան կողմից։

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.

Իմ նամակները։

ՄԱՀԱՑՈՒՑԱԿ.

Վեհափառ Կաթողիկոս Գէորգ Դ.—Տիկին Նատալիա Միրզոյեանց։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.

Բաֆֆի „Տարուայ չորս եղանակները։"—Սալավեվ-Նէսմելով.—Օր. Ն. Տ. Մ. աշխատութիւնները.—„Աղբիւրի" նուիրողները։—Խմբագրութեանս ստացած գրքեր. Սահակայ և Մեսրոպայ պատկեր Զրկինեանց ուսումնարանի նուիրատուն։ Աղբիւրի պատասխանները։—Ցայտարարութիւններ։

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ որոշել է առաջիկայ 1883 թուականի Սեպտեմբերի ամսից ունենալ Հայ օրիորդներից մի որդեգրուհի, Ս. Պետերբուրգում մանկավարժուհիւն կամ բժշկականուհիւն ուսանելու համար։ Որդեգրուհի լինել ցանկացող անձն աւարտած պէտք է լինի իւր ուսման դասընթացը ԳԻՄՆԱԶԻՕՆՈՒՄ՝ ՆԱԻԱՊԷՍ ՀԱՅՈՑ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ ԱՒԱՐՏԵԼՈՒՑ ՑԵՏՈՑ։ Այսպիսիք իւրեանց առաջարկութեամբ թող բարեհաճեն դիմելու վարչութեանը, ներկայացնելով թէ՛ Գիմնազիօնի և թէ՛ Հայոց միջնակարգ Ուսումնարանի Վարչութիւններից ստացած վկայագիրներ։

„ՎԱՐԺԱՐԱՆԻ“ Խմբագրութիւնը, փոխադարձաբար ընդունելով Կ. Պոլսում հրատարակուող „ԲՈՒՐԱՍՏԱՆ ՄԱՆԿԱՆՑ“ մանկական թերթի ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ, պատիւ ունի սորանով յայտնելու, որ բաժանորդ գրուել ցանկացողք կարող են դիմել Խմբագրութեանս, վճարելով կանխիկ տարեկան ՉՈՐՍ ռուբլի։

«ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ» և պ. Զ. Գրիգորեանցի «ԿՈՎԿԱՍԵԱՆ» Գրավաճառանոցներում ի միջի այլոց վաճառվում են ԱՌԱՔԵԼ ԲԱՀԱԹՐԵԱՆԻ հետևեալ աշխատութիւնները՝

1) Քերականութիւն աշխարհիկ լեզուի . . . . . — 25 կ.
2) Համառօտ գործական Հոգեբանութիւն . . . 1 ր. — „
3) Ուղեցոյց Հայ—ուսուցչի—(Մեթոդիկայ) . . . 1 „ — „
4) Այբբենարան—I տարի . . . . . — 4 „
5) Ընթերցարան II տարի . . . . . — 20 „
6) Մանկական պարտէզը կամ ծաղկոցը և նորա նշանակութիւնը . . . . . — 5 կ.